

**ԵՐԵԽԱՅԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**



Camtasia Studio®

TechSmith

- Դաստիարակության հիմնական նպատակը նոր ծնված երեխայի անձի ձևավորումն ու նրա հետագա զարգացումն է: Դաստիարակությունից է կախված երեխայի ընկալումը շրջապատող իրականության հանդեպ, նրա հարաբերությունները իր և շրջապատող մարդկանց հետ:
- **Զարգացման տեսությունները:**
- Ասոր չկան միասնական հայեցակարգեր երեխայի հոգեկանի զարգացման վերաբերյալ: Երեխայի զարգացման, վարքի և դաստիարակության վերաբերյալ առավել համապարփակ պատկերացում ունենալու համար նպատակահարմար է ծանոթանալ մի քանի տեսությունների հետ: Այդ տեսական հայեցակարգերը մշակվել են հոգեբանական տարբեր ուղղությունների շրջանակներում և զարգացման տարիքային պարբերացման համար կիրառում են տարբեր չափանիշներ:



**Երեխայի հոգեկան զարգացման պարբերացումը և օրինաչափություններն ըստ Լ.Բ.Վիգոտսկու
Տեսության հիմնական հասկացություններն են.**

Առաջատար գործունեություն:

- Առաջատար գործունեությունը երեխայի համար պետք է լինի իմաստ կերտող: Օրինակ, երեք տարեկան երեխայի համար նախորդում անիմաստ իրերը ձեռք են բերում իմաստ` խաղի համատեքստում: Հետևաբար, խաղն այդ տարիքում երեխայի առաջատար գործունեությունն է և իմաստավորման միջոցը:
- Առաջատար գործունեության համատեքստում ձևավորվում են մեծահասակների և հասակակիցների հետ բազային հարաբերությունները:
- Առաջատար գործունեության յուրացման արդյունքում առաջանում են տվյալ տարիքային փուլի հիմնական նորագոյացությունները /օրինակ. խոսքը/:
- Հոգեկան զարգացման յուրաքանչյուր փուլում առաջատար գործունեությունն ունի վճռորոշ նշանակություն: Միևնույն ժամանակ գործունեության մյուս տեսակներն անհետանում են: Դրանք, իհարկե, մասամբ պահպանվում են, բայց գոյություն ունեն գուցահեռաբար, պարզապես չեն համարվում գլխավոր` հոգեկան զարգացման համար:



Ճգնաժամեր

Երեխայի զարգացումն ընթանում է ոչ հավասարաչափ: Կան փուլեր, որոնք համեմատաբար հանգիստ են կամ կայուն: Եվ կան փուլեր այսպես կոչված ճգնաժամային /0,1,3,7,13,,18 տարեկան/: Ճգնաժամային փուլերում երեխայի անձնային հիմնական գծերը կտրուկ փոխվում են: Ճգնաժամային փուլերին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- Ճգնաժամն սկսվում է աննկատ, շատ դժվար է որոշել սկիզբն ու ավարտը: Դիտարկվում է կտրուկ սրացում ճգնաժամի միջին մասում և ճգնաժամը հասնում է իր գագաթնակետին:
- Երեխաների մոտ այդ փուլում նկատվում է կամակորություն, առաջադիմության և աշխատասիրության անկում, մեծանում է շրջապատողների հետ կոնֆլիկտների քանակը: Երեխայի ներքին կյանքը այդ փուլում գերլցված է տառապալից ապրումներով:
- Ճգնաժամերի ժամանակ զարգացման նեգատիվ բնույթը ի տարբերություն կայուն փուլերի, ոչ կառուցողական արդյունք է տալիս: Երեխան ավելի շատ կորցնում է նախորդում յուրացրածները: Այնուամենայնիվ փուլի վերջում դիտարկվում են կառուցողական գործընթացներ:



Կայուն փուլեր:

- Կայուն փուլերի ժամանակ երեխան կուտակում է քանակական փոփոխություններ, այլ ոչ թե որակական, ինչպես ճգնաժամային փուլերի ժամանակ: Դրանք կուտակվում են դանդաղ և աննկատ:
- Երեխայի հոգեկան զարգացումն ընթանում է կայուն և ճգնաժամային փուլերի հերթափոխությամբ:



Նորածնության ճգնաժամ /0-2 ամսեկան/

- Նորածնության փուլը որպես ճգնաժամ դիտարկվում է միայն վերջին տարիներին: Ճգնաժամի ցուցանիշը երեխայի քաշի կորուստն է ծնվելուց հետո: Նորածնի սոցիալական իրավիճակը շատ յուրահատուկ է և անկրկնելի, բնութագրվում է երկու պահով: Մի կողմից դա երեխայի լիովին կենսաբանական անօգնականությունն է, նա առանց մեծահասակի չի կարող բավարարել իր որևէ պահանջմունք

Մյուս կողմից, լիովին զրկված է նրա հետ շփման միջոցներից՝ խոսքից: Երեխան մոր օրգանիզմից ֆիզիկապես անջատվելուց հետո հայտնվելով բոլորովին նոր և խորթ միջավայրում, կարիք ունի հարմարման, որի համար բնությունը նրան որոշակի ժառանգություն է տալիս՝ բնական ռեֆլեքսներ՝ սննդառության, կլման, փնտրելու, փախչելու, սողալու, կառչման ռեֆլեքսներ, պայծառ լույսի դեպքում աչքերը փակում է, ներբանի տակ սեղմելիս ոտքի մատերը բացում է և պահում այնքան՝ մինչև ազդեցությունն անցնում է, ոտքի տակը քերծելիս՝ ծունկը ծալում է և այլն: Այս մեխանիզմների միջոցով երեխան ձեռք է բերում ֆիզիկական գոյատևման համար անհրաժեշտ առաջին պայմանական ռեֆլեքսները:

Երկու ամսեկանի շրջանում ի հայտ է գալիս **կայտառացման բարդույթը`**

- Մեծահասակին տեսնելիս ընդհանուր շարժողական ակտիվացում
- Շփման նախաձեռնողականություն` լացի, ձայնային զանազան վոկալիզացիայի օգնությամբ ուշադրություն գրավելու փորձեր
- Մոր հետ շփվելիս հարուստ ձայնարկություններով հակազդում
- Հակազդում ժպիտով
- Այս բուն ռեակցիան կոչվում է կայտառացման բարդույթ: Այն իր մեջ պարունակում է իսկական մարդկային առանձնահատկություն` ժպիտ, որը սոցիալական առաջին պահանջմունքի` շփման պահանջմունքի դրսևորում է,: Սրանով սկսվում է սոցիալական հույզերի զարգացումը: այս նորագոյացությունը համարում են նորածնության շրջանի ավարտի ցուցանիշ: Կայտառացման բարդույթը վաղ է դրսևորվում այն երեխաների մոտ, ում մայրերը ոչ միայն բավարարում են երեխայի կենսաբանական պահանջմունքները, այլև հաճախակի են շփվում, խաղում նրա հետ: Կայտառացման բարդույթի ի հայտ գալը հանդիսանում է նորածնության ճգնաժամի սահմանը, իսկ ժամանակին ի հայտ գալը երեխայի նորմալ զարգացման ցուցանիշն է:



Մեկ տարեկանի ճգնաժամը: /Մոր հետ հոգեբանական սիմբիոզի խզում/

Այս տարիքի ճգնաժամը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Քայլելու ունակություն, որի շնորհիվ երեխայի ֆիզիկական տարածքը ընդլայնվում է, ընդլայնվում է աշխարհի ճանաչման հնարավորությունը, ինքնուրույն տեղափոխման շնորհիվ երեխան ինքնուրույն հայտնաբերում է շրջապատող աշխարհը , ակտիվանում է հետաքրքրասիրությունը, որը պետք է խրախուսվի, քաջալերվի մեծահասակների կողմից: Քայլը հիմնական նորագոյացությունն է մանկիկային տարիքի, որով նշանավորվում է զարգացման հին իրադրությանից տարանջատում:
- Խոսք, որի շնորհիվ մեծանում է երեխայի իմաստալից շփման հնարավորությունը, շփման բացակայությունը, առարկայա-ճանաչողական գործունեության բազմազանության բացակայությունը կարող է առաջացնել արտաքին աշխարհի հետ կապի դժվարություններ
- առաջին կամային դրսևորումներ աֆֆեկտների տեսքով, ի հայտ են գալիս առաջին ըմբոստությունները, ուրիշներին ընդդիմանալը, /գոռում են, գետնին թավալվում, հրում մեծահասակներին և այլն/:



Երեք տարեկանի ճգնաժամը:

- Երեք տարեկանի ճգնաժամը վաղ մանկության և նախադպրոցական տարիքի սահմանագիծն է: Երեխան դառնում է անկառավարելի, վարքը ենթակա չէ շտման: Այս ճգնաժամի ախտանիշները յոթն են.
- նեգատիվիզմ-հակազդում են ոչ թե պահանջի բովանդակությանը, այլ որովհետև դա գալիս է մեծահասակից: Ձգտում են անել հակառակը, նույնիսկ ի հեճուկս իրենց ցանկության:
- համառություն-երեխան պնդում է իր պահանջը, ոչ թե որ շատ է ուզում, այլ որովհետև **ինքն է** պահանջում:
- կամակորություն-անդեմ է, ուղղված է ընդեմ դաստիարակության նորմերին, կյանքի ձևին:
- Ինքնակամություն-ձգտում է ամեն ինչ անել ինքր:
- բողոք-բունտ-երեխան շրջապատողների հետ պայքարի և կոնֆլիկտի մեջ է:
- արժեզրկման ախտանիշ-երեխան սկսում է խփել, կռվել ծնողների հետ:
- դեսպոտիզմ-ստիպում է ծնողներին անել իր կամքով, իր ուզածը:

Երեք տարեկանի ճգնաժամի պատճառը ինքնուրույն գործելու պահանջմունքի և մեծահասակների պահանջներին համապատասխանելու բախումն է, «ուզում եմ» և «կարող եմ» հակասությունն է: Հարկ է երեխային թույլ տալ զբաղվելու մի գործունեությամբ, որտեղ նա կարող է դրսևորվել ինքնուրույն :Այդ գործունեությունը խաղն է:



7 տարեկանի ճգնաժամ

- Այս ճգնաժամն իր բնույթով ինքնակարգավորման ճգնաժամ է հիշեցնում և նման է 1 տարեկանի ճգնաժամին: Երեխան սկսում է կարգավորել իր վարքը ըստ ընդունված կանոնների: Նրա գլխավոր պահանջմունքը իր նկատմամբ հարգանքն է: Այս ժգնաժամը սոցիալական “Ես”-ի առաջացման փուլ է: Այն բնութագրվում նոր համակարգային նորագոյացությամբ՝ “ներքին դիրք”, որն արտահայտում է ինքնագիտակցության և ռեֆլեքսիայի /վերլուծություն/ նոր մակարդակ: Տեղի է ունենում ապրումների փոփոխություն՝ սեփական ապրումների վերախմաստավորում



Մանկիկային տարիք /2 ամսեկան-1 տարեկան/

Այս փուլը համարվում է կայուն փուլ: Առաջատար գործունեությունը՝ անմիջական-հուզական շփումն է մեծահասակների հետ: Շարունակվում է տոտալ կախվածությունը մեծահասակներից: Մինչև մեկ տարեկանը երեխայի խոսքը պասիվ է, նա հասկանում է խոսքի ինտոնացիան, հաճախ կրկնվող որոշ բառերի իմաստը, սակայն դեռևս ինքը չի խոսում: Մեկ տարեկանի շրջանում ի հայտ է գալիս ինքնավար խոսքը, որը հանդիսանում պասիվ և ակտիվ խոսքի միջև անցումային փուլ: Երբեմն ինքնավար խոսքն անվանում են մանկական ժարգոն: Ինքնավար խոսքի առանձնահատկություններն են.

- 1. չի համապատասխանում մեծահասակների խոսքին հնչեղությամբ և նշանակությամբ
- 2. այդ խոսքի միջոցով կարող են հաղորդակցվել միայն երեխային շատ մոտ մարդիկ
- 3. բառերի միջև կապը յուրահատուկ է՝ հիշեցնում է ձայնարկություններ
- Ինքնավար խոսքի սկիզբը և ավարտը նշանավորում է մեկ տարեկանի ճգնաժամի սկիզբը և վերջը: Մեկ տարեկան հասակում երեխան հասկանում է 30բառ, արտասանում մի քանիսը: Հիմնական հարցերն են՝ որտեղ, ինչպես և պահանջող՝ տուր: խոսքի ուսուցման նպատակով հարկ է, որ ծնողները երեխայի հետ խոսեն հստակ, ճիշտ արտասանությամբ, բառը արտասանելիս ցույց տան առարկան:
- Այս տարիքի բազային պահանջմունքը անվտանգության, պաշտպանվածության պահանջմունքն է: ուշադրության, սիրո, քնքշանքի պակասի դեպքում երեխայի մոտ առաջանում է օտարվածության զգացում, չի վստահում արտաքին աշխարհին, ներփակվում է իր մեջ:



Վաղ մանկություն /1-3 տարեկան/

- Այս փուլում լիովին խախտվում է “Մենք” իրադրությունը՝ երեխայի և մեծահասակի միասնությունը: Սրա հաջորդ քայլը հոգեբանական հեռացումն է:
- Սա խոսքի զարգացման ամենակտիվ շրջանն է: Վերանում է ինքավար խոսքը, առաջ գալիս ակտիվ խոսքը՝ երեք տարեկանում արտասանում է բոլոր հնչյունները, 2-3 տարեկանում հասկանում է պատմություններ շրջապատող առարկաների և երևույթների մասին, 3 տարեկանում ակտիվ բառապաշարը կազմում է 1500 բառ, իսկ 1,5 տարեկանում կազմում է նախադասություններ 1-2 բառից կազմված:
- Մտածողությունը ակնառու-գործնական է: Հիմնականում կրկնում են մեծահասակների գործողությունները:
- Առաջատար գործունեությունը խաղն է: Սյուժեն պրիմիտիվ է և էպիզոտիկ: Ավելի ուշ առաջանում է սյուժետա-դերային խաղը, հետագայում՝ կանոններով խաղը:



- ինքնուրույն և ուղիղ քայլքի զարգացում, խոսքի և առարկայան գործունեության տիրապետում;
- Հոգեկան բոլոր գործառույթները զարգանում են ընկալման շուրջը, ընկալման միջոցով: Այս փուլում ինքնագիտակցության զարգացումը կապված է ինք իրեն ուրիշներից առանձնացնելու ունակության հետ: Գիտակցության նոր մակարդակին համապատասխան փոխվում է նաև հարաբերությունները մեծահասակների հետ: Երեխան իրեն համեմատում է մեծահասակների հետ և ուզում նմանվել նրանց ամեն ինչում: Երեք տարեկանում սկսվում է սեռային նույնականացումը՝ նա արդեն գիտի տղա է ինքը, թե աղջիկ: Դա նշանակում է, որ երեխան յուրացնում է նաև սեռին բնորոշ վարքաձևերը, որոնք ակնկալում են շրջապատողները իրենից: Նա իրեն համարում է տիեզերի կենտրոնը՝ ակնառու է եսակենտրոնությունը: Առաջ է գալիս «Ես ինքս» համառ ձգտումը, և եթե մեծահասակը չի կարողանում ճիշտ կազմակերպել իր և երեխայի գործնական համագործակցությունը, ցուցադրում է իր գերազանցությունը, ապա երեխայի մոտ առաջանում է նեգատիվ վարք: Այս տարիքին բնորոշ են նաև վախերի ավելի լայն դիապազոն, որը բացատրվում ավելի շատ տեղեկատվության ընկալման հնարավորությունով: Ծնողների անհամբերությունը, գրգռվածությունը կարող է ավելի խորացնել երեխաների վախը, բարձրացնել տազնապայնությունը: Բազային պահանջմունքը սիրո պահանջմունքն է:



Նախադպրոցական տարիք /3-7 տարեկան/

- Առաջատար գործունեությունը շարունակում է մնալ խաղը: Նրանք խաղում են ամբողջ արթուն ժամանակը: Խաղալիքների միջոցով նա ծանոթանում է գույների, ձևերի, ձայների հետ: Սկզբում խաղի մեջ նրանք կրկնօրինակում են մեծահասակների գործողություններն ու վարքը:
- Միջին նախադպրոցական տարիքում գերակշռում է դերային խաղը: Այստեղ երեխայի համար ամենագլխավորը դերային նույնականացումն է և խաղի սյուժեն ետին պլան է մղվում: Խաղի իմաստը դառնում է դերերի քաշխումը: Խաղում երեխան հնարավորություն ունի ապրելու այն, ինչն անմատչելի է մեծերի կյանքում: Ավագ դպրոցական տարիքում առաջ է գալիս կանոններով խաղը, որը երեխայի համար դառնում է սոցիալական նորմերի, կանոնների արժևորման ու պահպանման դպրոց:
- Խաղը մեծ նշանակություն ունի նաև երեխայի հուզական զարգացման համար: Այն օգնում է հաղթահարելու վախերը՝ գիշերային մղջավանջեր, տհաճ պատմություններ, երկարատև հիվանդություններ և այլն:



- Խաղը մեծ նշանակություն ունի նաև երեխայի հուզական զարգացման համար: Այն օգնում է հաղթահարելու վախերը՝ գիշերային մղջավանջեր, տհաճ պատմություններ, երկարատև հիվանդություններ և այլն:
- Նախադպրոցական տարիքի նորագոյացությունը հանդիսանում է դպրոցական ուսուցմանը պատրաստ լինելը: , որի չափանիշներն են.
- Հաղորդակցական պատրաստություն
- Կոգնիտիվ /ճանաչողական/ պատրաստություն
- Հուզական ոլորտի զարգացման համարժեք մակարդակ
- Անձնային պատրաստություն
- Տեխնոլոգիական տեղեկացվածություն



Կրտսեր դպրոցական տարիք

Կրտսեր դպրոցական տարիքը համարվում է մանկության վերջնակետը: Այն ընդգրկում է 6-7 մինչև 9-11 տարեկանը: Այս փուլում լիովին փոխվում է երեխայի կյանքի ոճը և ձևը՝ նոր ռեժիմ, նոր պահանջներ ու պարտականություններ, նոր սոցիալական դերեր, գործունեության նոր ձև՝ ուսում:

- Սոցիալական իրադրությունը.
- Ուսումնական գործունեությունը դառնում է առաջատար
- Ավարտվում է ակնառու- գործնական մտածողությունը
- Դոմինանտ է դառնում ձեռք բերումներ ունենալու մոտիվացիան
- Փոխվում է երեխայի փոխհարաբերությունների համակարգը շրջապատողների հետ
- Նորագոյացությունները՝ անձնային ռեֆլեքսիա, ինտելեկտուալ ռեֆլեքսիա:

Երեխայի բառապաշարը հասնում է մինչև 70000 բառի, ձեռք է բերում գրավոր խոսքի ունակություն, ամրապնդվում է բառա-տրամաբանակն մտածողությունը, դեռևս գերակշռում է ոչ կամային ուշադրությունը: Նույնը վերաբերվում է նաև ընկալմանը: 7-8 տարեկանը գերզգայուն փուլ է բարոյական նորմերի յուրացման համար՝ երեխան հոգեբանորեն պատրաստ է հասկանալու կանոնների ու նորմերի իմաստը: Ինտենսիվ զարգանում է իմքնագիտակցությունը, որը կախված առաջադիմությունից և ուսուցիչների շփման առանձնահատկություններից: Պահանջմունք ունի ինքնահաստատման, որի համար մեծ նշանակություն ունի ընտանիքում և դասարանում երեխայի զբաղեցրած տեղը;



Դեռահասություն

- Սա ընդգրկում է 10-11 մինև 14-15 տարեկանը: Համարվում է սուր ճգնաժամային, անցումային, դժվար փուլ: Այս փուլին բնորոշ է դեռահասի վարքային հակասականությունը: Արագ աճում է դեռահասի կմախքային համակարգը /ավելի արագ, քան մկանայինը/, ինչպես նաև սիրտ-անոթային համակարգը: Ավարտվում է սեռական զարգացումը: Այս փոփոխությունները դեռահասի մոտ առաջացնում են տազնապ, դեպրեսիա: Դեռահասության ճգնաժամի ձևավորմանը նպաստում են երկու տիպի գործոններ՝ արտաքին և ներքին:
- Արտաքին-ուսումնական առարկաների քանակական ավելացում, դասավանդող ուսուցիչների շատացում, հետևաբար և տարբեր գնահատում, ուսումնական նյութերում տեսական հենքի ներմուծում և այլն:
- Ներքին- բուռն ֆիզիկական զարգացում, հորմոնալ փոփոխություններ, զարգացման անհավասարաչափություն, որոնք էլ նպաստում են բարձրացված նեգատիվիզմի ձևավորմանը, արագ հոգնածությանը, գրգռված, նյարդային լարվածությանը:



- Դեռահասը շփման մեծ պահանջմունք ունի հասակակիցների հետ, նրանց կարծիքը դեռահասի համար դառնում է դոմինանտ, ճանաչված, ընդունված լինելը նմանապես; Առանձնահատուկ կարևորվում է դեռահասային ենթամշակույթների յուրացումը՝ ժարգոն, մոդայիկ լինելու միտում և այլն: Ուսումը ձեռք է բերում անձնային իմաստ: Փոփոխությունների գազաթնակետում է գտնվում դեռահասի ինքնագիտակցության վերաձևավորումը; “Ես-Կոնցեպցիան”՝ իր մասին պատկերացումների համակարգը լուրջ փոփոխությունների է ենթարկվում, որի արդյունքում, պարբերական ռեֆլեքսիայի հետևանքով կարող է ձևավորվել ցած ինքնագնահատական, անլիարժեքության ապրումներ:



Պատանեկություն

/16-17 մինչը 20-23 տարեկան/

- Այս փուլը կյանքի ուղու ընտրության, մասնագիտության ընտրության, տղաների համար զինվորական ծառայության փուլն է:

Նորագոյացությունը՝ անձնային և մասնագիտական ինքնորոշում: Առաջատար գործունեությունը՝ ուսումնա-մասնագիտական; Առաջանում է ուսումնական առարկաների նկատմամբ ընտրողական մոտեցումն է: Այս փուլը նաև աշխարհայացքի ձևավորման փուլ է, որը ոչ միայն գիտելիքների համակարգի և փորձի հավաքածո է, այլև համոզմունքների համակարգի, որոնց ապրումներն ուղեկցվում են դրանց ճշմարիտ լինելու վերաբերյալ ապրումներով: Աշխարհայացքային խնդիրների կենտրոնը կյանքի իմաստի փնտրման խնդիրն է՝ ինչի համար եմ ես ապրում, ինչպես ապրել, ինչ դառնալ և այլն: Պատանիների գլխավոր ձեռք բերումը մեծահասակներից էմանսիպացիան է: Կարևորագույն հոգեբանական բնութագիրը ինքնահարգանքն է /ինքնընդունում, ինքնաքաջալերում կամ հակառակը/: Դեռահասների աշխարհըկալման մեջ մեծ դեր ունի սոցիալական տարածքը: Ընտանիքը մնում այն հիմնական վայրը, որտեղ պատանին իրեն զգում է հանգիստ և վստահ: Անձի զարգացման համար կարևոր նշանակություն ունի շփումը հասակակիցների հետ՝ դա առանձնահատուկ խողովակ է տեղեկատվության և միջանձնային հարաբերությունների առանձնահատուկ ձև: Պատանեկության ճգնաժամը առաջանում է դպրոցն ավարտելու և նոր կյանք մտնելու հետ պայմանավորված:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



Camtasia Studio®

TechSmith